

Կ. ԵՉՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Կ. ԿՈՍՏԱՆՅԱՆՑԻՆ

Կարապետ Եղյանի (1835—1905) ստորև հրապարակվող նամակները արժեքավոր տեղեկություններ են պարունակում XIX դարի վերջին տասնամյակների հայ հասարակական, մանկավարժական և գիտական կյանքի վերաբերյալ:

Նամակները պահվում են Եղիշե Չարենցի անվան դրականության և արվեստի թանգարանի Ֆարապետ Կոստանյանցի արխիվում (№№ 803—804, 807, 810—813, 818, 821—823, 830, 834):

Վ. Գ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

1.

Մեծաբո բաբեկամ,

Պետք է մտածել, որ Ձեր նամակները իմ ձեռքը չեն հասել. ես Ձեր էջմիածին գնալուց հետո, ընդամենը 2 նամակ եմ ստացել. ա. 19 մարտից ուսանողական գումարների մասին, ուր հիշված է նախընթաց երկու նամակների մասին կարևոր տեղեկություններով, որոնք իմ ձեռքը չի հասած. և բ. հունվար 5-ից Առաքել պատմագրի և հրովարտականների տպագրության մասին, այդ նամակից ևս երևում է, որ Դուք այդ մասին ինձ մի անգամ գրած եք, բայց ձեռքս չէ հասել, ինչ պատճառով և ուր են կորել այդ նամակները և արդյո՞ք ինչ էին այն կարևոր տեղեկությունները, չգիտեմ, գուցե Դուք կկարողանաք մի կերպ լուսաբանել:

Դառնալով նամակների բովանդակությանը պետք է հայտնեմ Ձեզ, որ Ձեր դուրս բերած հաշիվները միանգամայն ճիշտ են և համաձայն Սալաբեկի¹ թղթի հետ, որ վերջերս մեզ գտնվեցավ Սանսոարյանի² մոտ. կարծում եմ, որ երկու գումարներն էլ, որոնք տոկոսներով հասնում են մինչ 1425 ո. պետք է գործ դնել տպագրական գործին, կամ ի ձեռք գիրք տպագրելու ընկերության, և կամ այլապես, հարմարության հանգամանաց նայելով: Եթե Դուք ևս հոժար եք փոխառվական գանձարանի գումարը գործ դնել տպագրության, պատրաստեցեք մի ստորագրություն ընդհանուր խոսքերով, որպեսզի գործադրելու ժամանակ արգելք չ'անդիսանա և ստորագրել տվեցեք Վաղարշապատ, Երևան, Կարս գտնվող անդամների³ և աղաբեկեցեք ինձ, այնտեղ Գալուստյան⁴, Մանուկյան⁵ և Սուսանյան⁶ համակրում են այդ մտքին, Տիխոսիցն էլ համաձայնություն կստանամ, և այդպես կվերջանա այդ կնձուռտ գործը. միայն թե ցանկալի է, որ այդ ստորագրությունը և նամակագրությունը դարձյալ հիմար հողվածների նյութ չտա:

էջմիածին տպագրել Առաքել⁷ և կամ հրովարտականներ⁸, ընդհանրապես ինձ հաճելի է, միայն թե գործ սկսելուն ես պետք է վստահ լինեմ, որ մինչև վերջանալը, Դուք այնտեղ կմնաք, առանց այդ վստահության անխոհեմություն կ'լինի սկսել և ապա գործը կիսատ թողնել, նաև ցանկալի է իմանալ թե էջմիածին կարող են գեղեցիկ և մաքուր տպագրել, բանի հարյուր տարի միան-

գամ տպագրելուց հետո, ցանկալի է, որ տպագրությունը իր ժամանակի աւր-վեստին համեմատ լինի: Կսպասեմ Ձեզանից այդ մասին տեղեկություն:

Իմ առաջարկությամբ Իզմիրյանցը⁹ գեղեցիկ և թանկագին գրքեր գնել է ձեմարանի համար, որոնք հետզհետե կստանաք:

Արդյոք Բաստամյանի երկասիրության տպագրությունը շարունակվում է, մեղք և ամոթ կլինի, եթե այդ պատվական գործը¹⁰ ապարդյուն մնա:

Ամենայն պատրաստությամբ կուղարկեի ձեմարանին նեյմանի¹¹ գրու-թյունը Դավիթ Անյ<աղթ> փիլ<իսոփայի> մասին, բայց ձեռքիս տակ շու-նիմ, այնտեղ Սանասարյանի գրքերը դարսած են արկղերի մեջ, և հանել կա-րելի չէ:

Որպես Ձեզ հայտնի է դանազան ժամանակ Ձեր մեծ[արգո] հոր¹² միջ-նորդությամբ, ուղարկած էի Արզրում փող, բայց այդ գումարներեն 200 ու տեղը հասած չէ: Այդ խնդիրը պարզելու համար բավական ժամանակ է, որ պատրաստել էի Տեր Հոր¹³ ներփակյալ նամակ. բայց մնացել էր. այժմ պա-տեհ առիթ եմ համարում ուղարկել Ձեր ձեռքով, գուցե Դուք ևս կկարողանաք պարզելու և նպաստիլ: Բարեկամացն, որոնք Ձեր ուսուցչական խմբի մեծա-գույն մասն են կազմում սիրո ողջույն խնդրեմ հիշել: Մեր ընտանիքը կող-ջունեն Ձեզ:

Մնամ Ձեր

Կար. Եզլան

1882—փետ. 27
Պ. Բուրգ.

2

1882, ֆետր. [Պ. Բուրգ]¹

Այստեղ մի Պաղեստինական ընկերություն է հաստատվել, որը ժողովում է ամեն ինչ որ վերաբերում է Սուրբ տեղեաց: Իր նախագահը տեղեկացած լինելով էջմ. գրատան ցուցակից, որ այնտեղ գտնվում են մի քանի շարա-դրությունը այդ նյութի վերաբերյալ. դիմեց իմ միջնորդության, որ ես ար-տագրել տամ և նոցա հասուցանեմ հետևյալ ձեռագրաց պատճենները. № 1114 Путь в Иерусалим Кеворка. № 165 ст. 3. истории Иерусалима и Кипра. Խնդրեմ արտագրել տվեցեք, իսկ եթե ձեռագիրները շատ մեծ են և վար-ձատրությունը նշանավոր գումար պետք է կազմե, այն ժամանակ զգուշության համար առաջուց ինձ գրեցեք:

Այսօր ստացա ըստ սովորության նոր օրացույցները թեև առանց սո-վորական տիտղոսի (աղգասեր և այլն):

Խնդրեմ ուղարկելիս (°) իմ շնորհակալությունս հայտնել:

Արդյո՞ք Մխիթար Գոշի² տպագրությունը շարունակվում է և տպարանը ի՞նչ վիճակի մեջ է, եթե բան տպագրելու հարկ լինի, շաբաթը ինչքա՞ն թերթ կարող են տպել. ցանկալի է Մխիթարի մի երես բան տպած ստանալ, որպես-զի տպագրության գեղեցկության և մաքրության մասին մի գաղափար ունենալ:

Ձեր

Կար. Եզլան

1883, ապրիլի 2, Պ. Բուրգ

Սիրելի բարեկամ,

Փետրվարի 28-ից գրած նամակը ստացա. Քիպերտի քարտեսները՝ սյնտեղ չկա վաճառելու. եթե Ձեզ հայտնի է, որ նորը տպած է, վերնադիրը ճշտությամբ արտագրեցեք, բերել կտամ. բայց եթե հին է կամ հինի պես, իմ կարծիքով չարժեք բերելը, քանի որ Տփիսիս բավական լիակատար քարտեսներ կան հրատարակված, որոնք ամփոփում են յուրյանց մեջ Ռուսաստանի և Տաճկաստանի Հայաստանը Փոքր Ասիայով հանդերձ. այդ քարտեսները՝ նշանակած են առանձին թղթի վրա և վաճառում են Տփիսիս: Հաղորդելու կարևոր նյութեր շատ կան, բայց կարոտ են պատեհ և ապահով միջոցների: Ցանկալի է լուր ունենալ Մակարի² մասին և նրա այլևայլ անձանց հետ հաստատած հարաբերությանց մասին: Մակարի հետ քանիցս թղթակցեցինք ճեմարանի մասին, և ինչպես որ Տփիսիսից գրում են, ապարդյուն եղած չեն այդ գրությունը. բայց որ անկեղծ կաբժիճն հարցանելու լինեք, ես կասեի, որ պետք էր բավականալ 6 դասարանով, օրինավոր կազմակերպելով նրանց, որ եղած վարժապետներով անկարելի չէ անել. և չեմ կարող ուրանալ, թե վարժապետների ոռճիկները անձոռնի մեծ են և հավանական, որ Աթոռը այդ ծախսերին դիմանալ կարողանալու չէ: Բայց որ ավելի ցավալին է, աշակերտաց մեջ չկա ոչ պարկեշտություն և ոչ երկյուղածություն, չեմ հիշում ուրիշ, երկրորդական բայց անհրաժեշտ հատկություններ. երևակայեցեք այդպիսի վարժապետներ կամ հոգևորականներ, ինչ չարիք պետք է բերին ազգի գլխին. պատասխանատուն ո՞վ է, միթե վարժապետական խումբը չէ, որ այդպիսի լիազոր իշխանությունամբ և առատ վարձատրությամբ կառավարում է ճեմարանը: Որչափ դատապարտելի է այդպիսի սուրբ գործում, այդպիսի ձգնաժամի մեջ զբաղիլ անձնական կոիվներով և անտարբեր աչքով ապրել աշակերտաց քայքայալ բարքը և բնավորություն<ը>, և միանգամայն թափուր և զուրկ լինելը այն հոգևոր ուժերից և վսեմ զգացմունքներից, որոնցով միայն կարելի է ազգի տունը շինել և կանգուն պահել եկեղեցի<ն> և ազգությունը:

Եթե այդ այդպես է, եթե գեթ մասամբ այդ նկարագրությունը ճշմարիտ է, այդպիսի հաստատության չլինելը լինելուց լավ է: Բայց քանի որ հեռու նրստած, կարող են սխալ գաղափար ստանալ մասնավորը ընդհանրացնելով, և քանի որ խնդիրը այդպես փափուկ է, և կարելի է հոնքը տրոփելու տեղ աչքը հանել, ամենայն զգուշությամբ սրտիս խորքերի մեջ պահում եմ այդ դառն մտածողությունը. բայց միայն Ձեզ վստահեցա հայտնելու, հուսալով, որ Դուր ուրիշներից ավելի սառնասրտությամբ կկարողանաք պարզել ինձ այդ անբարկուսանքը:

Փոխարքան այս օրերս գնալու է Տփիսիս, և Ձեզ մոտ կգա. հուսով եմ, որ ճեմարան<ը> կներկայանա նորան վայելուչ կերպով, ֆինների նման աչք<ի> ընկնող բաներ լինելու չեն: Նաև, անմիջապես տնօրենություն պետք է լինի ղինվորագրության մասին: Ես ամեն կերպ համակրում եմ այդ տնօրենության և օգտավետ եմ համարում. ցանկալի է հայոց ժողովրդի կողմանե, համակրողական ցույցեր լինեն, շնորհակալությամբ արտահայտվեք. բայց Աստված մի արասցե, սրանք միանան մահմեդականների հետ, եթե դոքա բողոքելու ուզենան. երանի եթե մահմեդականներ գաղթեն Տաճկաստան, կար-

ծեմ նոցա պահելու շէն, արդյոք կարելի չէ՞ նստաստել այդ շարժողության։ Խնդրեմ աղդու կերպով աղղարարեցեք այդ մասին Երևան, Աղեքսանդրապոլ և ուր որ կարելի է։

Իհարկե ոչ ոքի անուն տալ հարկ չկա։
Բոլորիցս ողջունյն

Ձեր

Կար. Եգլան

Անցյալ տարի հուլիս ամսին Արարատյանցը՝ այստեղից գնալուս պարտք էր առել ինձանից 100 ռ., խոստանալով հոկտ. վերադարձնել, բայց մինչև այժմ ոչինչ լուր չունիմ. լսել եմ, որ նա էջմ. դասատու է. խնդրեմ միտք բերեք նրան և ասեք, որ խնդրում եմ դարձնել։

1

85, ապրիլ 27, [Պ. Բուրգ]։

Սիրելի բարեկամ,

Մարտի 31-ից գրած նամակը և Լրկու ծրար Ձեր հրատարակած «Ողբերից»¹ ստացա անկորուստ։ Շնորհակալ եմ, որ պտտվեցիք ինձ այդ ընծայով և ուրախ եմ, որ ձեռնարկել եք այդ տեսակ աշխատանք, որ այժմյան հանգամանքներին նայելով հարմարագույն է և օղտակարագույն։ Կարդացի Ձեր հառաջաբանը և կարող չեմ ընդունել Ձեր կարծիքը, թե Ս. էջմիածնի պատմական նշանակությունը մոռացված էր և թե նորա վերահաստատությունը նպաստեցին կրոնական բանաստեղծությանը. կարծում եմ, որ Դուր հետևանքը պատճառի տեղ ևք ընդունում. այդ բանաստեղծությունը ցույց է տալիս թի երբեք մոռացված չէր թե «Աթոռը թափուր է», ինչպես ասում էր Ն. Շնորհալին, և աթոռակալը պանդխտության մեջ է և այլն և 1441 թվի նշանավոր պատմական անցքը կարելի չէ մի քանի ոտանավորների արդյունք համարել։ Օրպելյանի ողբի մեջ կան մի քանի լավ մտքեր՝ օրին.՝ «Հուսահատիլ չէ պարտ բնավին մեղ ի լուսո անմահ բախ<տավորության>» և այլն. 10 օրինակը հետը հետե բաժանում եմ, ում հարկն է։

Դրում ևք թե առաջարկած աշակերտների մասին պատասխան եք ստասում. չգիտեմ այդ ի՞նչ աշակերտներ են. չեմ հիշում, որ գրելու բան ունենայի, մի գուցե որ նամակը կորել է։ Այն թղթակցությունը որ ունեինք Կիլիկեցի տղայի համար, վերջացրած եմ համարում։

Մեր ընտանիքը Ձեզ սիրով կողջունեն։
Բարեկամացն կարոտալի ողջունյն։

Ձեռ

Կար. Եգլան

5

1887, մարտ 26, Պ. Բուրգ

Սիրելի բարեկամ,

Ստացա Ձեր փետր. 24-ից նամակը։ Դուր դարմանում եք, որ Ձեր խմբի էջմ. հավաքվելու մասին ուրախություն և միանգամայն ցավ եմ հայտնում. ես միշտ ուրախ եմ երբ որ ազնիվ և գործունյա ույժեր միանում և հավաքվում

են գործելու, մանավանդ այնպիսի մի նվիրական տեղ, ինչպես որ Ս. էջմ. ձեմարան<ն> է, բայց ցավում եմ, որ այդ ուժերը ապարդյուն, ամուլ են մընում, նրանց անդադար տեղափոխվելուց, ցրվելուց, և այն վարժարանը, որ պետք է օգտվեր, ևս առավել քայքայվում է. Ձեր գործունեության ամլությունը, Ձեր վիճակի թափառականությունը, ահա որք են ինձ ցավ պատճառում, որ և հայտնել էի Վարդանյանի¹ նամակումս:

Ցավում եմ Ձեր հուսահատական անտարբերությանը. իրավունք չունեք. այդ մի տեսակ բարոյական սնանկություն է. պարտավճար լինելու անկարողություն է. հոգեկան երկնավոր առաքինություններից զուրկ լինելն է: Ներեցեք բարեկամական անկեղծությանս, մանավանդ, որ հավաստի եմ, թե իսկական Ձեր հոգեկան վիճակը այնպես չէ, ինչպես որ նկարագրում եք: Դա մի անցավոր բուրբական վիճակ է. էկզարիս պատմում է այնտեղ, թե ձեմ. աշակերտաց ուսումնական վիճակը շատ ստոր է, թե մի երկու հարց առաջարկելուց հետո, զգուշացավ այլևս հայտնելու: Գիտություն չափը այնքան անդհացուցիչ վիճակի մեջ էր:

Ներկայումս տպում եմ Ղևոնդի պատմությունը², հուսով եմ հունիսին կվերջանա, գիտեք թերևս, որ մի ամիս առաջ դուրս եկավ այստեղ Թովմա Արծր. պատմ.³ Ք. Պետրովիչի հրատարակությամբ: Սեպտ.-ից միտք ունիմ Դարդելի⁴ պատմությունը տպել, եթե Խորեն նարայելից⁵ ստանամ թարգմանությունը. այլևս ամբողջացնում եմ Իսրայել Օրի[ի] թղթերը⁶: Հավանական է, որ էջմիածին էլ պետք էր լինեին այդ բանակցությանց վերաբերյալ գրություններ, կարելի չէ՞ խուզարկել տալ: Ղևոնդից, գուցե, մի փոքրիկ գումար կմնա, չգիտեմ դորանով ի՞նչ տպեմ, մտքիցս անցնում է Գրիգոր Մագիստրոսի, Թոնդրակեցվոց վերաբերյալ նամակները, բայց անմշակ վիճակի մեջ են. Դուք ի՞նչ եք կարծում. Ձեզ, Ձեր պատվարժան ամուսն<ուն> և բոլոր բարեկամներին շնորհավորում եմ Զատիկը: Ավետ. Բաբախանյանի⁷ հետ շարունակ վիճում ենք: Զղվեցուցիչ է:

Ձեր

Կար. Եղյան

Եթե Սիսովան⁸ գնող չկա, ինչ գնով որ վաճառվում է Տփլիս, գնացողի հետ ուղարկեցեք Կարին, որպեսզի գրաքննության ձեռքը չընկնի:

6

1889, փետր. 2 Ս. Պ. Բուրգ

Սիրելի բարեկամ,

Ցավում եմ, որ Ձեր պատվական նամակին դեկտ. 10-ից գրած մինչ ցայժմ պատասխանել չկարողացա: Ձեր առաջարկությունը Առաքել պատմագրի տպագրության մասին՝ կարող էին[ք] որևիցե հղանակավ իրագործել, և ես արդեն վաղուց այդ մտքով գրել էի Հուսիկ Վարդապետին և հայտնել էի, թե ինձ համար միևնույն է ուր տպագրվի, միայն թե ընտիր տպագրություն լինի և խընդրել էի նորանից ինչ ինչ տեղեկություն, բայց նորա պատասխանը այնպես կարճ ու անկիրթ էր, որ ես անտեղի եմ համարում, իմ կողմանե որևիցե առաջարկություն անել այդ մասին: Չարախնդաց լուրեր արդեն հասնում են և շրջում են օտար շրջաններում, որ ձեմարանի մասին խոսիլ չարժե, որովհետև

կապվելու է, առ ի շգոյե գրամի: Այդ մասին ղգուշացրի Մակար Սրբազանին: Առաքելի մահարձանի՝ համար մի բան կմտածեմ: Հանգուցյալ Իղմիրյանը բերել էր տվել 5 օրինակ Հայկազյան բառգիրքներ, մի բանի հատ Առձևոն բառարաններ և այլն: Հայկազյան բառարաններ մտածում եմ այդպես բաժանել. 1. Ճեմարան, 2. Երևանա դպրանոցը, 3. Ներս. ուսումն. 4. Ախլցխա ուսումն. 5. Պահել առայժմ, որովհետև կարծեմ Ալեքսանդր. կա արդեն:

Խնդրեմ Ձեր կարծիքը ինձ հայտնել. նաև ունիմ Lebeau² և Reclus առաջինը Ներս. ուսումն. կուղարկեմ, իսկ երկրորդը ճեմարան: Հույս ունեմ ստանալ հանգուցյալ<ի> ժառանգներից³ մի բանի գումարներ ի թիվ որոց և 1000 ո. չափ հօգուտ էջմ. այսինքն կամ դգեստ նվիրել վանքի, և կամ ճեմարանի օգտին գործածել, իհարկե այնպիսի մի բանի վրա, որ իբրև հիշատակ մնա:

Խնդրեմ այդ մասին ևս Ձեր դատողությունը հաղորդել ամենտեղն: Մեր ընտանիքը կարոտիվ կողջունեն: Խնդրեմ Ձեր պատվարժան ամուսնույն ծառայությունս հիշել:

Ձեր

Կար. Եզյան

7

1889, մաքտի 3, [Պ. Բուրգ]

Սիրելի բարեկամ.

Հոռու Մելիքյանի մահվան պատճառով գնացել էի ընտանյաց տեսություն Եվրոպա, այնտեղից վերադարձած գտա Ձեր նամակը հուն. 4-ից: Մեր թըղթակցությունը այդ վերջին ժամանակ այն աստիճան հատուկոր և պատահական են, որ դժվարանում եմ մտաբերել, թե ո՞ր ենք կանգ առել: Թվի թե Դուք նամակներն չեք ստանում, կամ ես Ձերը, բայց ինչ պատճառով չգիտեմ: Ինչևիցև, ապրում ենք մի տեսակ, անփոխարինելի կորուստներ կրելով: Վախճանվեցավ ի<որիս> Մել<իքյան>, որի հետ ունեցած մտերմական հարաբերությունն շատ մխիթարական էր, մերձ ի մահ է Ք. Պատկանյանը, միակ մարդ<ն> էր այստեղ, որի հետ կարելի էր խոսել և միմյանց հասկանալ: Հեռագիրը գուժեց Պալասանյանի մահը, որ նույնպես ցավ պատճառեց: Դարձյալ չպետք է հուսահատվել, հուսահատությունից լավ բան ծագելու չէ:

Ամառը միտք ունեմ Դարգելը տպագրելու՝. նորայլը իմ հանձնարարություն և խնդրանքը պատրաստում է տպագրության համար Կորյունը²: Շատ շնորհակալ կլինեմ, եթե կարելի լինի արտագրել տալ էջմիածնա մեջ գտնված Հովսեփի կաթողիկոսի³ վերաբերյալ թղթակցությունը. բավական նյութ ժողովել եմ, պետք է լրացնել:

Ձեր պատվարժան ամուսնույն թե մեր բոլոր ընտանիքից և թե ինձանից խնդրեմ խոնարհ ծառայությունս հիշել:

Ձեզ ամենք բարևում են:

Նամակս ստանալու մասին խնդրեմ լուր տվեցեք:

Ձեր

Կար. Եզյան

Քանի հատոր ունեք Reclus-ի աշխարհագրությունից. այս միջոցին պետք է ձեմարանին գրքեր ուղարկեմ, ի թիվն որոց Zenker բառգիրքը⁴ Pr. Gagarin⁵ carcasse pittoresque*.

8

1889, ապր. 20, Ս. Պ. Բուրգ.

Սիրելի բարեկամ,

Շնորհակալ եմ Ձեր նամակից, որով թե մեղ հիշեցիք և թե տեղեկություններ հաղորդեցիք Ձեր մասին։ Տաթևացու գրությունը ինձ մանավանդ հետաքրքրություն պատճառեց, որովհետև ներկայումս ես զբաղված լինելով մոտաբանական Կիլիկիայի քաղաքական և եկեղեցական խնդրով, շոշափում եմ և Գրիգոր Տղայի պատմությունը մասամբ, ուստի խնդրում եմ հաղորդել ինձ, թե ինչպիսի բովանդակություն ունի նա. լսել աստվածաբանական վիճաբանություն, թե Գր. Տղայի և Ներսես Լամբր<ոնացու> կենսագրությանը վերաբերյալ և պատմական տեղեկություններուն։ Եթե այս վերջին տեսակի բովանդակություն ունի այդ թուղթը, ինձ ցանկալի կլիներ ունենալ մի օրինակը, կամ գոնե այն հատվածները, որոնք հիշյալ բովանդակությունը ունեն։

Խնդրեմ ինձ հայտնեք, թե ձեմարանի մատենադարանը Reclus-ի աշխարհագրության միջև որ հատորն ունի, որ չեղածը՝ լրացնեմ։ Մեր ընտանիք<ը> Ձեզ բարևում են, խնդրում եմ ինձանից խոնարհ ծառայությունս հիշել Ձեր պատվարժան ամուսնուն։

Ձեր

Կար. Եզլան

9

1889, մայիս 21, Պ. Բուրգ.

Սիրելի բարեկամ,

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը մայիսի 7-ից, մեջը ամփոփած տեղեկություններով հանդերձ. ավելի լիակատար տեղեկություն կամ հիշած թղթերից բաղվածք անհամբեր կսպասեմ։ Այժմ խնդրում եմ ուղարկել ինձ էջմ. տպած «Պատմություն ժողովուրդ Հայաստանեայց եկեղեցվոյ»¹ և Պատմ. հաշակրաց²։

Գանք այժմ Ձեր առաջարկած հարցերին և եթե մինչև այսօր Ձեզ բան չեմ գրած, որովհետև գրելու բան չկա։

Գուցե առաջիկա արձակուրդի պատճառով այդ մասին ոչոք չէ խոսում և թվի թե չեն էլ մտածում։ Թաղման³ միջոցներին առիթ ունեցա մի քանի պրոֆեսորների մեջ հիշել Ձեր և հալաթյանի անունները, իբրև այդպիսի անձանց, որոնք կարող էին հանգուցյալի տեղը բռնել⁴, բայց ոչ ոք ձայնակից չեղավ։ Հետո կողմնակի կերպով լսել եմ, որ իբր թե միտք ունիք պատրաստելու Մառնրիտաուարդի, որին շատ էր գովում հանգուցյալը, Դուք պետք է նորան ձանաչեք, ես տեսած չեմ... Եթե Դուք խնդիրն ուղարկեք, ոչ մի բանին վնասիլ չէ կարող. բայց չեմ կարող ասել, որ մի բանի օգնե, ամսոս որ Դուք մագիստրոսություն աստիճանը չեք ստացել, ինչ և իցե այժմ ամառվա պատճառով ամեն ինչ լռած է։ Պատվական ամուսնուն Ձեր խոնարհ ծառայությունս խնդրեմ հիշել։

Ձեր

Կար. Եզլան

* Ուղագրավ ուրվագիծ։

Սիրելի բարեկամ,

Շնորհակալ եմ Ձեր տված տեղեկությունից, պետք է իմանաք, որ ի պատասխան Հուսիկ վարդապետի՝ հարցման, թե արդյոք չեմ ուղենար էջմ. տպարանի մեջ տպագրել տալ Առաքելի պատմությունը, պատասխանեցի, թե ես անտարբեր եմ, թե որի ձեռքով կամ ուր պետքն է տպագրվի այդ գործը, այլ միայն ընտիր և կատարյալ կերպով տպագրվի, և թե չեմ կարծում, որ էջմ.-ը կարողանա արժանավոր կերպով գլուխ հանել այդ ձեռնարկությունը, գլխավորապես թղթի վատության, տառասխալների շատության և օտար լեզուների տառերի պակասության պատճառով. բայց եթե այլ է տպարանի վիճակը, թող բարեհաճե՞ն ինձ գրել, մինչ ցայժմ պատասխան չունիմ և չեմ կարծում որ վարդապետը այդ տմարդությունը անե, որ չպատասխանած և ինձանից կարծիք չստացած, գործի ձեռնարկել։ Ձեզ հայտնի է, որ ես մտադիր եմ հառաջաբանի մեջ կաթոլիկ քարոզիչներին գործունեությունը Հայաստանում նկարագրել և բավական նյութ ունիմ ժողոված այդ մասին եվրոպական աղբյուրներից, ավելցնել հստակ անվանց ցանկ բացատրություններով, օտար բառերի ցանկ մեկնություններով, և ավելցնել հայոց գաղթականության ի Պարսկաստան նրկարագրությունը ժամանակակից կաթոլիկ մի քարոզչի Gouvea², որ ականատես է եղել. այդ գիրքը շատ հազվագյուտ է, նրա միակ օրինակը Փարիզի գրատանն է գտնվում. բերել տվեցի և արտադրեցի, այժմ թարգմանվում է հայերեն։ Այստեղի նոր կազմված տպարանի մասին մի դադափառ տալու համար, կուղարկեմ Ձեզ նոր դուրս եկած մի գիրք. իմ տպագրությունս Լեհաստանի հայերի կաթոլիկությունը ընդունելու մասին³ (որ դարձյալ Առաքելի հետ հարակցություն ունի) դեռ վերջացած չէ, միայն 12 թերթ է տպած։ Մինչև հունվար կվերջանա։

Մենք այն վիճակին չենք հասել որ մին մինից խլենք, մանավանդ որ էջմ.-ը, բացի Հ. Բաստամյանի պատվական աշխատանքը, որի մասին նույնպես զրած էի, տպագրվելու բան չատ կդտնե, թե որ ուղենա. եթե վենետիկ և Փարիզ տպած մատենագիրները տպագրել տա նոր համեմատությամբ և աժան տարածե, արդեն ծառայություն արած կլինի։ Եթե Առաքել տպագրին, ոչ այնպես, որպես ես եմ ուզում, ես իմ տպագրությունս կանեմ և կնվիրեմ մի հասուատության, որովհետև նորա վաճառելուց ծախս հանելու աղնկալություն չունիմ։

Ահա այդ է իմ կարծիքը, որ կարող եք ում կամենաք հայտնել։

Գրում եք թե գեթ էջմիածին հիշեմ, եթե Ձեզ մոռացել եմ։ Ոչ որի չեմ մոռացել. բայց ի՞նչ անեմ, բանի որ մեր վիճակը այդպես է՝ Տեղակալը անփութ ու անգործ, ինչ է անում Սինոդը, ով է իմանում, երանի ոչինչ չաներ, գումարները, որոնք պետք է ապահովելին ալղային ճեմարանը՝ վատնվում և այնինչ ճեմարանը, որ ողորմելի աղզի խեղճ դավակների համար էր հիմնված, այսօր նոցանից թոշակներ է պահանջում, որը ասեմ և ումը ասեմ, մնում է միայն հառաչել առ Աստված և միայն նորանից խնամք և ողորմություն սպասել...

Այստեղ եղած ժամանակը հրատարակած էինք մի աշխատություն⁴. վսնքական դպրոցների մասին մի պատմական ակնարկ էիք արել, որ կարծեմ

չվերջացած մնաց. եթե իրավունք տայիք օգուտ քաղել այդ աշխատությունից, կխնդրեի Ձեզ ինձ ուղարկելու. հարկավոր կլինի շատ. գիտեք, որ հուզյալ վիճակի մեջ է խնդիրը:

Ձեր

Կար. Եզյան

Հայտնի է Ձեզ նույնպես, որ համեմատում եմ արդեն Բրոսեի թարգմանությունը⁵:

11

յ2, հուլիսի 29, Ս. Պ. Բուրգ.

Սիրելի բարեկամ,

Շնորհակալությամբ ընդունեցի Ձեր նոր աշխատանքը¹, Եղիսաբեթին հատկացյալ օրինակը նորան հանձնեցի. թեև Արձագանքի մեջ² կարդացել եմ հառաջաբանը և այժմ կարդացի բնագիրը, այնուամենայնիվ կարծիքս հայտնելու համար, կարոտ եմ ավելի ուշադիր ուսումնասիրություն:

Ձեզ հայտնի է, որ ես մեծ կարեւորություն եմ տալիս մեր պատմական հիշատակարանների հրատարակմանը և այդպիսի հրատարակությունը ինձ մեծ մխիթարություն է պատճառում:

Այնօր եկավ մոտս խոյեցյանց երիտասարդը, համակրելի տղա երևեցավ ինձ, իհարկե ձեռքիցս եկածը կշխատեմ անել նորա համար: Շատ ափսոսացի, որ չգիտեի, թե մեր Ավետիք Բաբախանյանի ընտանիքը Դրեզդեն է, մայիսին այնտեղ էի, եթե իմանայի, վերադառնալուս անշուշտ այցելություն կանեի ներանց: Մերոնցից և ինձանից խոնարհ ծառայություն խնդրեմ հիշել Ձեր պատվարժան ամուսնուն:

Մնամ Ձեր

Կար. Եզյան

12

95, Մարտի 25, Ս. Պ. Բուրգ.

Սիրելի բարեկամ,

Այսօր ձանապարհեցի Ձեզ նորայրի մի աշխատանքը¹ հետևյալ դիտավորությամբ. եթե այդ երկասիրությունը այստեղ տպագրելու լինիք, մեծ աշխատանք և ծախսերի կարոտ է, ոչ մեկը և ոչ մյուսը նվիրելու ձեռնհաս չեն². մանավանդ որ, թեև աշխատանքը նշանավոր է, այնուամենայնիվ հազիվ քսաներեսուն մարդ կարող լինի օգտվել նորանից, իսկ անտիպ թողնելը մեղք է:

Այդ ամենը աչքի առաջ ունենալով մտածեցի առաջարկել Արարատի³ խմբագրությանը տպագրել այդ երկասիրությունը մաս մաս, ամիսը՝ 1—3 թերթ իբրև հավելված Արարատի, որ նորան ուսումնական փայլ կտա. հետևյալ պայմաններով, որ Դուք և պ. Քառամյանը⁴ հանձնառու լինեք հսկել տպագրությունը և սրբագրություն անել. ինձ համար 300 օրինակ առանձին տպագրել ավելի ազնիվ և հաստ թուղթի վրա. թղթի զինը, և ուրիշ մանր ծախսը (բացի շարելը) այդ 300 օրինակի համար, ես կվճարեմ, այդ 300 օրինակից առնվազն 100-ը (չգիտեմ նորայրը ինչքան կուզենա) կթողնեմ հօգուտ ձեմարանի:

Նորայրի նամակներից, որ ուղարկած եմ Ձեզ, կտեսնեք, որ նա ցանկանում է վերջին սրբազրույթունը տեսնել, կարծեմ որ տպարանը այնքան տառունի, որ կարող է մի ամիս շարած պահել մինչև թերթը Ստոկհոլմ խրկվի և հետ գաւ Այդ ամենը հաղորդելով Ձեզ, խնդրում եմ գլուխ բերել այդ գործը, որովհետև չեմ ուզենար, որ Մխիթարյանց մոտ տպվի, կսպասեմ Ձեր պատասխանին:

Նորայրը խնդրում է նորան ուղարկել Ձեր տպած Օրպելյանի ողբն ի սուրբ Վաթողիկե Էջմիածնի, եթե կարելի է ուղարկեցեք հետևյալ հասցեով՝ Norayr. Stockholm 15, Ferdsgatau 15.

Շնորհավորելով Ձեր պատվարժան ամուսինը և Ձեզ Քրիստոսի սուրբ Հարության տոնը,

Մնամ Ձեր

Կար. Եզյան

13

1895, ապրիլի 29, Ս. Պ. Բուրդ.

Սիրելի բարեկամ,

Ստացա նամակը Ձեր ամսույս 21-ից գրածը: Կառաջարկեք Նորայրի երկասիրության տպագրելու հետևյալ եղանակը.

ա. որ տպագրվի իբրև առանձին գիրք, բայց չեք գրում թե քանի ժամանակում այդ տպագրությունը կարող է վերջանալ և թե առանձին տպագրությունը ապահովացնում է տպագրության անխափան վերջանալը.

բ. խնդրում եք, որ ես որոշեմ իմ նպաստի քանակությունը, բայց չեք գրում որչափ է հարկավոր գործը գլուխ բերելու համար. ի նկատի ունենալով, որ ինձ 200 օրինակից ավելի հարկավոր չէ, թող մնացյալ < > մնա հօգուտ էջմիածնա:

գ. Սրբազրության թերթերը ուղարկելը շատ ծանր պայման եք համարում, բայց չեք գրում, թե կարող եք երաշխավոր լինել, որ անսխալ տպվի, որովհետև եթե սովորականի պես սխալներով լի տպեն, այն ժամանակ բարվոք է ամենեին տպել, մանավանդ որ այդ հեղինակի պայման < ն > է, նա ինձ առաջարկում է վիեննա տպել, բայց ես նախանձախնդիր լինելով էջմիածնա պատվին, հանձն չեմ առնում:

Ես կարող եմ նպաստ առաջարկել մինչև 300 ո. (երեք հարյուր) կկամենայի ստանալ 200 օրինակ: Արարատի հետ ցրվել Ձեզանից կախում ունի, կարող եք մի քանի գլուխներ մաս մաս տպել Արարատի մեջ. Կորյունի բնագիրը հետը տպելու մասին կբանակցեմ Նորայրի հետ և Ձեզ ժամանակին կհայտնեմ:

Ուստի եթե վստահ եք, որ Ձեր ցույց տված եղանակով տպագրությունը կարող է հաջողությամբ և անընդհատ շարունակվել և վերջանալ և անսխալ տպագրվի և եթե նպաստս բավարար է, սկսեցեք տպագրությունը. թեև շատ ցանկալի է, որ կստարվեր Նորայրի իրավացի ցանկությունը, որ սրբազրության թերթերը նորան ուղարկվեն. մանրամասնությունն թողնում եմ Ձեր վճռին:

Ձեր պատվարժան ամուսնուն խոնարհ ծառայությունս խնդրեմ մատուցանել:

Ձեր

Կար. Եզյան

1895, հոկտ. 31, Պ. Բուրգ,
Николаевская, 35

Սիրելի բարեկամ,

Պետերբուրգ վերադարձած գտա Ձեր նամակը սեպտ. 11-ից. հարկավոր էր ճիշտ տեղեկություններ ժողովել, որպեսզի սխալանաց մեջ չընկնեմ. այդ պատճառով պատասխանս ուշացավ. խնդրեմ ներողություն:

Ինչպես Ձեզ հեռագրել էի ոչ մի ժամանակ (срок) նշանակած չէ դիտարկող ներկայացնելու համար և երբեք ոչ մի տեղից այդպիսի հարց հարուցած չէ: Այդ մասին ուրեմն կարող եք հանգիստ լինել: Միայն մի բան խորհուրդ եմ տալիս Ձեզ՝ Ձեր երկասիրությունը այնտեղ չտպել, այլ Տփլիս կամ էջմիածին, եթե ոչ կնահատակվեք. խեղճ Մառը երկու տարի տպում է¹, կարող չէ վերջացնել: Մի երկու ամսից հետո Խալաթյանը պետք է դա պաշտպանելու, նորա աշխատանքը արդեն տպած է. Об источниках Мосеса Хоренского². Ինչ որ Ձեզ հարկավոր կլինի, խնդրեմ գրեցեք: Հուսամ, որ նորայրի երկասիրության տպագրությունը սկսած կլինեք, այն դիտմամբ, որ մինչ գարունը տպագրությունը վերջանա, հառաջաբանը իմ մոտն է, երբ որ մի երկու տպած թերթ ստանամ, կուղարկեմ նորա մոտ հառաջաբանի հետ. Իսկ հառաջաբանի տպագրությունը պիտի ըստ իս տեղի ունենա բառագիրքը տպագրելուց հետո:

Մեր վիճակը տաժանելի է, կատարյալ ձգնաժամ է: Աստված ողորմի: Եվ այդ ամեն տեղ՝ էջմիածնից սկսած, ուր անհոգություն բուն է դրել: Ոչ պակաս փորձանք է սպառնում ազգի և եկեղեցվո ձեմարանից, այսինքն նորա աշակերտներից, մանավանդ վարդապետացած, միանգամայն շունեն եկեղեցականի գաղափար անգամ, ոչ գիտեն, թե ինչ կարող են անել և ինչ չէ, արհամարհում են բոլորը, ինչ որ եկեղեցական է (Տիրայր³ օրինակի համար մի անգամ միայն պատարագ է արել և այն իմ պահանջով) ավելացնենք, կատարյալ տգիտություն ըստ ամեն մասանց և այլն և այլն. զորն ասեմ, ուշադրություն դարձրեք:

Նախկին Մխիթարյանց վարդապետ Քալավյան գերմ.-հայերեն⁴ Բառգիրքի⁴ հեղինակը, քաղցած մեռնում է վիեննա. արդյոք Ձեզ պետք չէ⁵ գալ իբրև դասատու, նմանապես հայերենի համար կարող եք ի նկատի ունենալ Գուրգենին⁵, Գրեցեք ինձ այդ մասին:

Մերոնք ամենքը սիրով ողջունում են: Մեր Նիկողոսը ամուսնանում է մի սպարկեշտ նախիջև[անցի] օրիորդի հետ:

Խնդրեմ խոնարհ ծառայությունս մատուցանել Ձեր պատվարժան ամուսնուն:

Ձեր

Կարապետ Եղյան

1897, նոյեմբ. 6, Ս. Պ. Բուրգ

Սիրելի բարեկամ,

Ձեր նամակ հոկտ. 3-ից ստացա. առաջ՝ այդ չափ միայն կպատասխանեմ. թե Հառիճո վանքի մեջ, ըստ իս առավել հարմար է գյուղատնտեսական դպրոց բանալ. դպրությունը կանոնադրությունը պատրաստելով, ուր կարելի է, ասել, թե դասախոսության на родном языке (փոխ. հայերեն) չեմ կարող

հաջողությունը երաշխավորել. բայց փորձել պետք է. նույն միտքը ուղում է իրագործել յուր կալվածքի մեջ Ձա<քար> Գրիգորյանցը¹. այդ նպատակի համար ուղարկում եմ Ձեզ կանոնադրությունը. եթե այդ տեսակ դպրոց բանալը շահողվիլ, կարելի է մտածել և որբանոցի մասին:

Հազ. ճեմարանի ուսուցչության պաշտոնի մասին մտադիր եմ խոսել նոր տեսչի հետ: Թեև նա նորեքս, յուր նշանակ<վ>ելուց հետո, ինձ նամակ է գրել, բայց անձամբ ծանոթ չեմ, հավանական է, որ տոներին կգա այստեղ և առիթ կունենամ խոսելու:

Եկեղ. դպրոցների նկատմամբ կզրեմ այլ անգամ, ըստ իս պետք է փոխադարձ համաձայնությամբ որոշել հոգ[աբարձություն] ուսումն իշխանությունաց հարաբերությունը և դպրոցական վարչությանց եղանակը. էականը՝ հայերեն լեզվով դասախոսություն[ն է]. այդ մասին այլ անգամ:

Հանձնեցի Գաբրիելյանցի 5 ռ., որ ուղարկե կարապետ վարդապետին² և խնդրե ինձ ուղարկել Սոկրատի պատմ.³ Առաքել պատմ. նոր տպագրությունը և այլն, հուսամ շուտ կկատարե՝ շնորհակալությամբ ստացա Գետադարձի մասին աշխատությունը⁴. կարծես թե ուղում եք նորան արդարացնելու: Փարիզ հայագետներից մեկը խնդրում էր ինձանից Համաբարբառ⁵ հին և նոր կտակարանաց. ես ունեմ, բայց միայն մինչ 400 էջը... եթե հնարավոր է ստանալ կամ ունեցածիս շարունակությունը և կամ ամբողջ օրինակը, շատ ուրախ կլինեմ...

Մերոնք ամենքը սիրով կողջունեն թե Ձեզ և թե Ձեր պատվարժան ամուսնուն:

Մնամ Ձեր
Կառ. Եզլա

Սիրելի բարեկամ,

Ստացա Ձեր ուղարկած գիրքը Մկրտիչ նաղաշ և յուր տաղերը¹. շատ լավ եք անում, որ հավաքում եք մեր դրականության այդ փշրանքները, դոքա շատ անգամ մեր պատմության թանկագին աղբյուրներ են կաղմում, միայն ես կարծում եմ, որ չպետք է բառացի հասկանալ սիրո տաղերը, վարդ ու բլբուլի սիրահար խոսակցությունը, դա պարսկական աղղեցություն է, պետք է այլաբանորեն ըմբռնել, ինչպես պարսից դրականության մեջ:

Եկավ այստեղ Ավետիքը, ուրախ էի նորան տեսնելու, բայց առաջվա սիրտը և աշխույժը չէ մնացել, որ մինչև 4 ժամը վիճենք, վիճելու խնդիրներն էլ չմնացին, ամենը առանց մեզ վճռեցին:

Շնորհակալ եմ Ձեր համակրական խոսքերի համար իմ երկասիրության համար². Երանի թեմեղմացների թշնամյաց սրտերը: Ցանկալի է իմանալ թե վաճառվեցավ այդքան Ձեզ ուղարկած 10 օրինակը, թե մեր անտարբերության շնորհիվ, անշարժ մնացին:

Մերոնք ամենքը սիրով կողջունեն թե Ձեզ և թե Ձեր պատվարժան ամուսնուն:

Մնամ Ձեր
Կարապետ Եզլա

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

1. Սալարեկյան— Կ. Կոստանյանցի ուսանողական ընկերը, հետագայում ուսուցիչ Ն. Նախիջևանի թեմական դպրոցում:
2. Սանասարյան Մկրտիչ— Թիֆլիսցի մեծահարուստ, նրա կտակած միջոցներով հիմնադրվում է էրզրումի Սանասարյան վարժարանը:
3. Նկատի ունի Մ. Սանասարյանի կտակի գործադիր հանձնաժողովի անդամներին:
4. Դալստյան Հովհաննես— մանկավարժ, պաշտոնավարել է Սանասարյան վարժարանում և այլ դպրոցներում: Դրել է. «Համառոտ աշխարհագրութիւն քաղաքական ի պետս բարձր դասաց ուսանողաց աղգիս» (Թեոդոսիա, 1865), «Նոր ու զվարճալի ընթերցարան հայերեն լեզվի» (Թեոդոսիա, 1865):
5. Մելքոնյան— ուսուցիչ:
6. Սուսանյան Եղիա— ուսուցիչ, պաշտոնավարել է Թիֆլիսում, Թեհրանում, Թավրիզում:
7. Առաքել Դավրիժեցի, Դիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669: Նաև՝ Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, 1896:
8. Նկատի ունի ուսաց կայսեր՝ էջմիածնի կաթողիկոսարանին հղած հրովարտականները:
9. Բզմիրյանց Հովսեփ— ղզլարցի հարուստ վաճառական: Սրա կտակով 1884 թ. սահմանվում է մրցանակաբաշխութիւն՝ հայագիտական լավագույն աշխատութիւնների համար: Մրցանակը կոչվում էր նաև Սահակ-Մեսրոպյան: Այն տրվում է թարգմանչաց տոնի օրը: Նույն կտակով օրիորդաց դպրոց է հիմնվում Մուշում:
10. Խոսրը Վահան Մ. վարդապետ Բաստամյանցի Դատաստանագիրք հայոց (Վաղարշապատ, 1880) գրքի ձեռագրի մասին է:
11. Նեյման Կարլ Ֆրիդրիխ (1793—1870)— գերմանացի պատմաբան, արևելագետ-հայագետ, ուսանել է Միլիթարյանների մոտ, ճանապարհորդել է Զինաստանում, որտեղից Մյունխեն է բերել 12000 գրքից բաղկացած մի գրադարան: Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, գրել է ըագմաթիվ ուսումնասիրութիւններ, որոնց թվում և «Memoire sur la vie et les ouvrages de David, philosophe arménien du Ve siècle de notre ère». Paris, J.A., 1829, T. III.
12. Նկատի ունի Կոստանյանցի հորը Հովսեփ քահանա Կոստանյանցին, որը ավագ քահանա էր Ալեքսանդրապոլում:
13. Դարձյալ նկատի ունի Կոստանյանցի հորը՝ Տեր-Հովսեփին:

2.

1. Նամակը չի հասցեագրված, ելնելով բովանդակությունից և կողմնակի փաստերից, կարելի է ենթադրել, որ այն հասցեագրված է Կ. Կոստանյանցին:
2. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, խմբագրությունը և առաջաբանը Վահան Մ. վարդապետ Բաստամյանցի:

3.

1. Kiepert H., Vincke und Moltke V. Memoir über die Construction der Karte von Kleinasien und türkisch Armenien in 6 Blatt... nebst Mittheilungen über die physikalisch-geographischen Verhältnisse der neu erforschten Landstriche, Berlin, Schropp, 1854, In—8, III + 194 p., cartes.
2. Մակար— Ամենայն Հայոց կաթողիկոս (1885—1891):
3. Արարատյանց— Դեորգյան ճեմարանի ուսուցիչ, գրել է հոդվածներ թվաբանության դասական դման մասին:

4.

1. Կ. Կոստանյանց, «Ս. Օրբելյան Ողբ ի Ս. կաթողիկոս Թիֆլիս, 1885 թ.:

5.

1. Վարդանյան Փիլիպոս— մանկավարժ, թարգմանիչ: Պաշտոնավարել է Դեորգյան ճեմարանում, ներսիսյան ու Ն. Նախիջևանի թեմական դպրոցներում:

2. «Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց», առաջարան Կ. Եզյանցի, 1889:
3. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1877:
4. Դարդել Հովհաննես, Ժամանակագրութիւն հայոց, թարգմանութիւն Խորեն Նարայեյի, առաջարան Կ. Եզյանի, Ս. Պետերբուրգ, 1891 թ.:
5. Խորեն Նարայեյ (1831—1893)— ուսանել է Ս. Ղազարում, հոգևորական, մանկավարժ, բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ, գրել է «Արշակ Բ», «Ալաֆրանկա», «Ստվեր հայկականք» և այլն, թարգմանել է Լամարտինի «Դաշնակները»:
6. Խոսրը վերաբերում է հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրիի Արևմտյան Եվրոպայում կատարած ճանապարհորդությունների, Ռուսաստանում և Պարսկաստանում վարած բանակցությունների փաստաթղթերին, որոնք հավաքել և հրապարակել է Կ. Եզյանը իր մեծածավալ աշխատության մեջ (Г. А. Эзов, Сношение Петра Великого с армянским народом, СПб, 1898).
7. Բաբախանյանց Ավետիք— Կ. Կոստանյանցի դասընկերը Պետերբուրգում: Հետագայում բժիշկ:
8. Ղևոնդ Ալիշան, Սիսվան, Վենետիկ, 1885:

6.

1. Խոսրը Առաքել Դավրիժեցու գերեզմանի վրա դրվելիք արձանի մասին է:
2. Lebeau Ch., Histoire du Bas-Empire. Neuvi. ed., augmentée, Paris, 1836, en 21 vol.
3. Նկատի ունի Իզմիրյան Հովսեփի ժառանգներին:

7.

1. Տես՝ նամակ 5, ծանոթ. 4:
2. Նորայր Բիւղանդացի, Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք, Թիֆլիս, 1900:
3. Նկատի ունի Հովսեփ Արղւթյանին:
4. Zenker J. Th. Catalogus universi cleri archidiaecesis Leopollensis ritus Armeni pro anni domini, Leopoli, 1859. և Zenker J. Th. Bibliotheca Orientalis. Manuel de bibliographie orientale. T. II, Leipzig, 1846—1861.
5. Gagarin J. Constitution et situation presente de toutes les Eglises de l'Orient. Paris, Deunoi, 1865.

8.

1. Reclus Elisée. Nouvelle géographie universelle, vol. 1—19, Paris, 1876—1894.

9.

1. Մխիթարյան Աբել, Պատմութիւն ժողովոյ Հայաստանեաց եկեղեցւոյ, հանդերձ կանոնադրութիւնք, ս. էջմիածին, 1874 թ.:
2. «Պատմություն խաչակրաց» վերտառությամբ հայերեն հրատարակված գիրք մեզ հայտնի չէ:
3. Նկատի ունի Ք. Պատկանյանի թաղումը:
4. Ք. Պատկանյանը մինչև իր մահը վարում էր հայկական գրքերի գրաքննչի պաշտոնը. նրա սահից հետո հայ գործիչները մտահոգվել են, թե ով պետք է նշանակվի այդ պաշտոնում:

10.

1. Հուսիկ վարդապետ Տեր-Մովսիսյան (հետադայում Լսյիսկոսոս)— էջմիածնի միաբանության անդամ, բանասեր, մանկավարժ, գրել է՝ «Անապատականներ և վանականություն» (Վաղարշապատ, 1908), «Հայրապետական աթոռի մասին համառոտ տեսություն» (Վաղարշապատ, 1909), «Վրաց Եպիփան կաթողիկոսի արձանագրությունը և Աբու-Սաիդի հրովարտակը» (տե՛ս Օրբելի Հ., «Անվճռ ավերակները», Վաղարշապատ, 1914):

2. Gouvea Antoine de, Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Chah-Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet en suite du voyage de quelques religieux des Hermites de St. Augustin envoyés en Perse par le roi catholique Dom Philippe, roi du Portugal. Trad. du portugais. Rouen, Loyselet, 1646.

3. Բռնի միութիւն հայոց Հեհաստանի ընդ Հոռմա: Ժամանակակից հիշատակարանք, առաջարան Կ. Եղյանի, 1884: Հիշյալ աշխատանքը հրատարակելուց հետո Եղյանը նորից է անդրադարձել նույն թեմային, սակայն չի կարողացել իրականացնել նշված գրքի ավելի ընդարձակ տպագրութիւնը:

4. Կ. Կոստանյանցը Պետերբուրգում հղած ժամանակ շարադրում է վանական դպրոցների մասին մի աշխատութիւն, որը սակայն չի տպագրվել. իր՝ հեղինակի, ասելով, դա պետք է լինէր «Հայոց վանքերը» աշխատութիւն շարունակութիւնը:

5. Բրոսե Մարի (1802—1880) ծագումով ֆրանսիացի, ասլրել և դործել է Պետերբուրգում, կայսերական ակադեմիայի անդամ, դրականագետ-հայագետ-վրացագետ, 270 աշխատութիւնների հեղինակ: Այստեղ նկատի ունի, ըստ երևույթին Բրոսեի «Des historiens arméniens des 17^e et 18^e siècles. Arakel de Tauriz, Registre chronologique (St. Petersburg, 1873) ղիւրքը:

11.

1. Կ. Կոստանյանց, Հովհաննէս Թլկուրանցին և յուր տաղերը, Թիֆլիս, 1892 թ.:

2. «Արձագանք», 1892, № 52, 58:

12.

1. Նկատի ունի Նորայր Բյուզանդացու Կորյունի մասին գրած ուսումնասիրութիւնը (տե՛ս № 7 նամակի 2 ծանոթագրութիւնը):

2. Նկատի ունի նաև Սանասարյանին և Իլմիրյանին, որոնք նպաստներ էին հատկացնում հայկական գրքերի տպագրութիւն համար:

3. «Արարատ» (1868—1920), էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսարանի պաշտոնական ամսագիր:

4. Քարամյան Նիկողայոս — պատմաբան, բանասեր, մանկավարժ, պաշտոնավարել է Գեփորգյան ճեմարանում: Գրել է՝ «Պարթևները Պարսկաստանում և նրանց հարաբերութիւնը հայոց հետ», Վաղարշապատ, 1887, «Պ. Պողոսյան և նրա վեպերը», («Մուրճ», 1889, № 1, էջ 127—132, № 2, էջ 184—200, № 3, էջ 459—475):

14.

1. Նկատի ունի՝ Марр Николай Яковлевич, Из летней поездки в Армению, СПб, 1895.

2. Նկատի ունի՝ Г. Халатян, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников, М., 1896, աշխատութիւնը:

3. Տեր-Հովհաննէսյան (Մելիք-Մուշկամբարյան) Տիրայր (1867—1956) — բանասեր, թարգմանիչ: Որոշ ժամանակ խմբագրել է «Արարատ» ամսագիրը: Թարգմանիլ է Բայրոնից, Ֆ. Կուպերից և այլ հեղինակներից: Առաջին անգամ ասպարեզ բերելով Ֆրիդին, կաղմել է տաղերգուի համեմատական տեքստը («Ֆրիդ-դիվան»), որը լույս է տեսել Նյու-Յորքում, 1952 թ.:

4. Քայլավյան (Կոյլավ) Ավետիք — լեզվաբան, մանկավարժ: Հեղինակ «Գերմաներեն-հայերեն բառարանի», Վիեննա, 1888:

5. Գուրգեն Հակոբ (Անտոն Պիպեռճյան, 1850—?) — հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ: Մնվել և կրթութիւն է ստացել Կ. Պոլսում, որտեղ և հիմնել է «Հայկական կրթարան» և վարել այն 1876—1890 թթ.: Խմբագրել է «Ճաշակ ոսկեղեն դպրութիւն» ամսագիրը (1886—1888): Պաշտոնավարել է նաև Սանասարյան վարժարանում:

15.

1. Գրիգորյանց Ջաքար — ուսուցիչ, ուսանել է Պետերբուրգում, գրել է «Մարդակազմութիւն տարրական դասեր» (Թիֆլիս, 1881):

2. Տեր-Մկրտչյան Կարապետ (1866—1915) — հայկաբան, մանկավարժ, ուսանել է Գևորգյան ճեմարանում, համալսարանական կրթութիւն է ստացել Գերմանիայում (Հայպիդ. Հալլէ,

Բեռլին, Քյուրինգեն)։ Եղել է հիշյալ ճեմարանի տեսուչ, «Արարատի» խմբագիր։ Գրել է բազմաթիվ հայագիտական հոդվածներ և մի շարք մենագրություններ, որոնց թվում՝ „Die Pauliklaner im byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig, 1893. Նույնը հայերեն՝ «Պաղիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և Մերձավոր հերձվածային երևույթներ Հայաստանի մեջ» (Երուսաղեմ, 1938), «Տիմոթեոսի եպիսկոպոսի Աղեքսանդրեայ հակաճառութիւն առ սահմանեալսն և ժողովոյն Քաղկեդոնի» (Տեր-Մինասյանի հետ), էջմիածին, 1908, «Դոփյանք և Մելիք Շահնազարյանք» (նյութեր հայ մելիքների մասին), էջմիածին, 1914։

3. Տեր-Մովսիսյան Մեսրոպ, Սոկրատա պատմութիւն եկեղեցիական, Վաղարշապատ, 1887։

4. Կոստանյանց Կարապետ, Տեր-Պետրոս Ա. Դետաղարձ, Վաղարշապատ, 1897։

5. Միհրդատյան Թ., Համարարառ հին ու նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895։

16.

1. Կ. Կոստանյանց, Մկրտիչ Նաղաշ և յոր տաղերը։ Հավելված՝ Աղեքսանդրի պատմության կաթաները, Թիֆլիս, 1898։

2. Նկատի ունի՝ Г. Эзов. Сношение Петра Великого с армянским народом (СПб., 1898) աշխատությունը։

ПИСЬМА К. ЭЗОВА К. КОСТАНЯНЦУ

В. Г. ВАРДАНЯН

(Резюме)

Публикуемые письма Карапета Эзова (Езянз, 1835—1905) содержат ценные сведения об армянской научной, общественной и просветительской жизни последних десятилетий XIX в. Они хранятся в Музее литературы и искусств им. Егише Чаренца в Ереване (архив Карапета Костанянца, дела № 803—804, 807, 810—813, 818, 821—823, 830, 834).